

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-134>

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

*ի.գ.թ., Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս
ՎԱՐԱԶԴԱՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ*

*ի.գ.թ., Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի
ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս*

ADELINA SARGSYAN

*PhD in Law,
Lecturer at the Department of Criminal Law and
Criminal Procedure Law Institute of Law and Politics of the
Russian-Armenian University*

VARAZDAT SUKIASYAN

*PhD in Law,
Lecturer at the Department of Criminal Law and
Criminal Procedure Law Institute of Law and Politics of the
Russian-Armenian University*

АДЕЛИНА САРГСЯН

*Кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права Российско-Армянского университета*

ВАРАЗДАТ СУКИАСЯН

*Кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права Российско-Армянского университета*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑԻԱՅԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

SOME ISSUES OF THE IMPLEMENTATION OF THE PRINCIPLES OF INTERNATIONAL CRIMINAL LAW

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИМПЛЕМЕНТАЦИИ ПРИНЦИПОВ МЕЖДУНАРОДНОГО УГОЛОВНОГО ПРАВА

*The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA
(Research project № 25YR-5E005).*

Ներածություն

Քրեական օրենսդրության սկզբունքների ուսումնասիրությունն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում Միջազգային քրեական դատարանի Հռոմի Ստատուտի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացման լույսի ներքո: Կարևոր է հատկապես ՀՀ քրեական օրենսգրքի և Հռոմի Ստատուտի դրույթների համեմատականը, հնարավոր առկա բացերի և հակասությունների վերհանումը, դրանց վերացման հիմնական ուղղությունները, ինչպես նաև հայկական քրեական օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործմանն ուղղված հիմնավոր առաջարկությունների մշակումը:

Միջազգային քրեական իրավունքը համատեղում է ներքին քրեական իրավունքի դրույթները և միջազգային իրավունքի դրույթները, ինչը որոշում է նաև դրա սկզբունքների հատուկ ամբողջությունը¹: Միջազգային քրեական իրավունքի սկզբունքների հետահայաց վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք առաջին անգամ արտացոլվել են 1945 թվականի Նյուրնբերգի տրիբունալի կանոնադրության մեջ: Հետագայում սկզբունքներն արտացոլվել են Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (1993) և Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալի (1994 թ.) կանոնադրություններում, այնուհետև 1998 թվականի ՄԲԴ կանոնադրության մեջ:

Ազգային իրավական համակարգերի մակարդակով իրավունքի ընդհանուր սկզբունքների որոշումը կարող է բաղկացած լինել երկու առանձին քայլերից, որոնք համապատասխանաբար անվանում են «ուղղահայաց քայլ» և «հորիզոնական քայլ»: Ուղղահայաց քայլը բաղկացած է ազգային իրավական համակարգերի իրավական կանոնների վերացարկումից: Հորիզոնական քայլը բաղկացած է ազգային իրավական համակարգերի համեմատությունից, որն ուղղված է ստուգելու, թե արդյոք պետությունների ընդհանրությունը ճանաչում է այդ իրավական սկզբունքը²:

Հիմնական հետազոտություն

1. ՀՐԱՄԱՆԻՆ ԿԱՄ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵ-ԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Միջազգային քրեական իրավունքի առանցքային սկզբունքներից մեկը, որն իր ամրագրումն է գտել ՄԲԴ-ի Հռոմի Ստատուտի մեջ, հրամանին կամ կարգադրությանը հղում կատարելու անթույլատրելիության սկզբունքն է: Այս սկզբունքը, որն իր արտացոլումն է գտել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության մեջ, ունի միջազգային իրավական հարուստ հիմք, որն իր ուղին սկսել է Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, երբ հանցագործները փորձել են խուսափել քրեական պատասխանատվությունից՝ հղում կատարելով վերադաս պաշտոնատար անձանց հրամաններին:

Այն փաստը, որ դատարանի իրավասության ներքո գտնվող հանցագործությունը կատարվել է անձի կողմից կառավարության կամ պետի հրամանով, լինի դա ռազմական, թե քաղաքացիական, չի ազատում այդ անձին քրեական պատասխանատվությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ. Ա) այդ անձն իրավաբանորեն պարտավոր էր կատարել տվյալ կառավա-

¹ Полный курс уголовного права. В 5 т. Т. 5 / Под ред. А.И. Коробеева. С. 707.

² Elias, Olufemi and Lim, Chin, ‘“General Principles of Law”, “Soft” Law and the Identification of International Law’, NYIL, Vol. 28, 1997, pp. 3–49.

րության կամ տվյալ պետի հրամանները. Բ) այդ անձը չգիտեր, որ հրամանն անօրինական է. և գ) հրամանն ակնհայտորեն անօրինական չէր: Սույն հոդվածի նպատակների համար Ցեղասպանության հանցագործության կամ մարդկության դեմ հանցագործությունների կատարման հրամաններն ակնհայտորեն անօրինական են:

Նշված սկզբունքի առնչությամբ որոշիչ նշանակություն ունի Քեյթեյլի գործով որոշումը, որի անկյունաքարը վերջինիս մոտ «**բարոյական ընտրության**» առկայությունն էր:

Կարծում ենք, իրավակիրառ գործունեության մեջ չարաշահումները բացառելու և այս մեղմացուցիչ հանգամանքի հաճախակի օգտագործումը բացառելու նպատակով կարելի է ամրագրել այն դրույթը, ըստ որի՝ հրամանի կատարումը կարող է մեղմացուցիչ հանգամանք ճանաչվել բացառիկ՝ շարքային զինծառայողների նկատմամբ, այլ ոչ թե անմիջապես «հանցավոր գաղափարախոսություն կրողների» վերնախավի, որոնց, մասնավորապես, պատկանել է ֆելդմարշալ Վիլհելմ Քեյթեյլը:

ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «Հրամանը կամ կարգադրությունը կատարելը», բնորոշվում է հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե անձը գիտակցել է հրամանի կամ կարգադրության հանցավոր բնույթը կամ չի գիտակցել, *սակայն կարող էր գիտակցել* և կատարել է դա, ապա ենթակա է քրեական պատասխանատվության»: Միևնույն ժամանակ, IV սկզբունքն ասում է. «այն հանգամանքը, որ որևէ անձ գործել է ի կատարումն իր կառավարության կամ պետի հրամանի, չի ազատում այդ անձին միջազգային իրավունքի համաձայն պատասխանատվությունից, եթե *գիտակցված ընտրությունը նրա համար փաստացի հնարավոր էր*»:

Հիշատակված նորմի վերլուծությունից երևում է, որ առանձին կարգավորված չեն այն դեպքերը, երբ անձը գիտակցել է հրամանի հանցավոր բնույթը, սակայն կատարել է այն՝ իր նկատմամբ տեղի ունեցած ֆիզիկական/հոգեկան հարկադրանքի հետևանքով:

Հաջորդիվ, Հռոմի Ստատուտի 33-րդ հոդվածում նշվում է, որ Ցեղասպանության կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների կատարման հրամաններն ակնհայտորեն անօրինական են:

Կարծում ենք, որ ՀՀ օրենսդրին անհրաժեշտ է փոխառել այս դրույթը՝ միաժամանակ ընդլայնելով, այսպես կոչված, անօրինականության կանխավարկածը, ցանկում ներառելով խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններ: Օրինակ, ՀՀ ՔՕ 146-րդ հոդվածը Ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական թշնամանք հարուցելու նպատակով մշակութային արժեքները ոչնչացնելը կամ վնասելը:

Միևնույն ժամանակ, հիմնվելով միջազգային քրեական օրենսդրության մեջ «խելացի սվինների» հայեցակարգի վրա, անհրաժեշտ է նշել «գիտակցված ընտրության հնարավորություն» տերմինի կարևորությունը, քանի որ ներկայում հանցավոր գործունեության իրականացման ձևերի և մեթոդների բազմազանությունը, պատերազմական հանցագործությունների բազմազանությունը կարող են առաջ քաշել գիտակցված ընտրության հնարավորության և հրամանի անօրինականության մասին իրազեկության հարցը: Օրինակ, հակառակորդի գույքի ոչնչացումը կամ առգրավումը որոշ դեպքերում չի կարող ակնհայտ հանցավոր լինել հրամանը կատարողի համար:

«...Այս առումով իրական չափանիշը, որը այս կամ այն չափով պարունակվում է պետությունների մեծ մասի քրեական օրենսդրության ձևակերպումներում, ոչ թե հրաման ունենալու փաստն է, այլ այն հարցը, թե արդյոք գործնականում հնարավոր էր բարոյական ընտրություն: Այն մարդը, ով հանդիպել է պարզի վրանգին, նույնիսկ մահապատժին, դեռ բարոյական ընտրություն ունի, եթե նա որոշի չկատարել հանցավոր հրամանը: Նա, ով հանդիպել է պար-

Ժի վրանգին, նույնիսկ մահապատժին, դեռ բարոյական ընտրություն ունի, եթե նա որոշում է չկատարել հանցավոր հրամանը: Նա կարող է նախընտրել իր պատիժն ապօրինի վնաս պատճառել մեկ այլ անմեղ մարդու: Սա, իհարկե, բարոյական նկատառումներից ելնելով ընտրություն է: Անդրադառնալով ամենածայրահեղ օրինակին՝ պետք է ասել, որ ոչ ոք չի կարող ուրիշի կյանքի դեմ ուրնձգել՝ սեփական կյանքը պահպանելու համար³:

Finta-ի գործով Կանադայի Գերագույն դատարանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ պետի հրամանով գործողություններ կատարելը, կարող է թույլատրելի լինել որոշ հանգամանքներում, մասնավորապես, եթե ենթական բարոյական ընտրություն չունի հրամանի կատարման վերաբերյալ, նույնիսկ այն դեպքում, երբ հրամանն ակնհայտորեն անօրինական էր:

Այսպես, որոշման մեջ նշվում է հետևյալը՝ «Ռազմական հանցագործությունների կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների կատարման համար դատական հետապնդման ընթացքում զինված ուժերի կամ ոստիկանության կազմից անձինք կարող են դիմել պաշտպանության՝ վկայակոչելով պետի հրամանը: Նման հանգամանքները, որոնք ազատում են պատասխանատվությունից, պետք է ստուգվեն բացահայտ անօրինականության չափանիշի կիրառմամբ. պաշտպանությունը՝ պետի հրամանով գործողություններ կատարելու հղումով, անթույլատրելի է, եթե համապատասխան հրամաններն ակնհայտորեն անօրինական են եղել: Բայց նույնիսկ եթե հրամաններն ակնհայտորեն անօրինական էին, պաշտպանությունը՝ վկայակոչելով պետի հրամանով գործողություններ կատարելը կամ հասարակական կարգը պահպանելու համար, հնարավոր կլինի այն հանգամանքներում, երբ մեղադրյալի առջև **բարոյական ընտրություն դրված չի եղել**՝ կատարել կամ չկատարել հրամանը: Այս իրավիճակը կարող է տեղի ունենալ, եթե մեղադրյալը գործել է հարկադրանքի կամ սպառնալիքի ազդեցության տակ, և նա այլընտրանք չի ունեցել հրամանը կատարելու համար⁴:

Ակնհայտ ապօրինի, որպես ընդհանուր կանոն, ճանաչվում է այն հրամանը, որի բովանդակությունը հակասում է բարոյական գաղափարներին և խղճի համաձայն ապրող ողջամիտ, բարեպաշտ մարդու կողմնորոշմանը, և որն ակնհայտորեն հանցավոր է՝ առանց որևէ կասկած թողնելու դրա անօրինականության մեջ:

«Ակնհայտորեն անօրինական» հրամանի տարբերակիչ նշանը պետք է աչքի զարնի, ինչպես տրված հրամանի վրա ծածանվող սև դրոշը, որպես նախազգուշական նշան, որն ասում է. «արգելված է: Արգելվում է»: «Եթե դա կարող են որոշել միայն իրավագետ մասնագետները, հրամանն անօրինական չէ. որոշակի և ակնհայտ անօրինականություն, որը երևում է հենց հրամանում : .. Հակաօրինականություն, որը գրավում է աչքը և վրդովեցնում սիրտը, եթե աչքերը փակ չեն, և սիրտը չի մթազնում կամ այլասերվում⁵»:

ՄԲԴ-ի Հռոմի կանոնադրության 33-րդ հոդվածի 2-րդ մասում մարդկության և ցեղասպանության դեմ հանցագործությունների վերաբերյալ նշվում է, որ դրանց կատարման հրամանն այնքան ակնհայտ անօրինական է, որ այդ հանգամանքն ապացուցելու անհրաժեշտություն չկա: Մինևույն ժամանակ, նման վերապահում բացակայում է ռազմական հանցագործությունների դեպքում: Մի շարք որոշումներում նշվում է նման հղում կատարելու անթույլատրելիության մասին նաև պատերազմական հանցագործություններ կատարելիս, օրինակ, *Prosecutor v. M. Bralo* որոշումը:

³ Приговор по делу в отношении нацистского преступника Кейтеля.

⁴ R.V. Finta [1994] 1 SCR [701], Supreme Court of Canada.

⁵ Israel, District Military Court for the Central Judicial District, Ofer, Malinki and Others case, Judgement, 13 October 1958.

Հրամաններին հղում անելով՝ Պաշտպանության հնարավորության մասին բանավեճը՝ վերադասների հրամաններին հնազանդվելու տեսքով, դարեր շարունակ ներթափանցել է միջազգային իրավական ոլորտը⁶:

Այն հարցը, թե արդյոք այդպիսի պաշտպանությունը (բացարձակ կամ ընդհանրապես) գոյություն ունի միջազգային սովորության իրավունքում, քննարկման առարկա է, ինչը հանգեցնում է այն պնդումների, որ նման պաշտպանությունը «պաշտպանության առավել հակասական ձևերից մեկն է» Միջազգային քրեական իրավունքում: Ռիսկայնությունն արտացոլում է պաշտպանության հիմքում ընկած ներքին լարվածությունը: Զինվորը կարող է գնդակահարվել ռազմական տրիբունալի կողմից, եթե նա չի ենթարկվում հրամանին, և դատապարտվի դատավորի և երդվյալ ատենակալների կողմից, եթե նա ենթարկվի դրան⁷:

Մի շարք գիտնականներ ի օգուտ հրամաններին հղում անելով՝ Պաշտպանությանը, վկայակոչելով հրամանը, վկայակոչում են հայտնի փիլիսոփա Թոմաս Հոբսի դատողությունները, որոնք շարադրված են նրա «Լեիաթան» աշխատության մեջ, որտեղ նա նշում է, որ Հոբսի տեսությունը քաղաքացիների և զինվորների վրա բացարձակ պարտականություն է դնում ենթարկվել վերադասների հրամաններին: Լոքն առաջնահերթություն է տալիս օրինականությանը, այլ ոչ թե անվերապահորեն ենթարկվելով վերադասների հրամաններին⁸:

Միջազգային քրեական իրավունքի պաշտպանության ներքո գտնվող արժեքներն ու բարիքները, համամարդկային արժեքները պետք է առաջնահերթություն ունենան և գերակշռեն ռազմական կազմակերպությունում կարգապահության պահպանման անհրաժեշտության նկատմամբ: Նշվածի կապակցությամբ առավել քան արդիական է ռազմական հանցագործությունների դեպքում հրամանի ակնհայտ ապօրինության հարցը:

Արտակարգ իրավիճակներում իրականացված մարտական գործողությունների և սովորական պայմաններում մարտական գործողությունների միջև պետք է տարբերություն սահմանվի: Ինչ վերաբերում է ավելի ցածր աստիճանի ենթականերին, ապա արտակարգ իրավիճակների ժամանակ սթրեսային պայմանները մեծացնում են հնազանդվելու նրանց հոգեբանական հակումը⁹, և ավելի հավանական է, որ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով կամ ժամանակի սղությունից հրամանատարը ունենա տեղեկատվություն (հրամանին օրինականություն հաղորդող), որը ենթականերին հասու չլինի¹⁰:

Զինվորի առջև բարդ իրավիճակ է առաջանում՝ երկընտրանք, երբ նա պետք է ընտրություն կատարի՝ ենթարկվել անօրինական հրամանին և ենթարկվել քրեական պատասխանատվության, կամ ղեկավարության կողմից պատժվել հրամանը չկատարելու համար:

Բայց, նույնիսկ, եթե հրամաններն ակնհայտորեն անօրինական էին, հրամաններին հղում անելով՝ պաշտպանությունը հնարավոր կլինի այն հանգամանքներում, երբ մեղադրյալը չի կատարել բարոյական ընտրություն: Այս իրավիճակը կարող է տեղի ունենալ, եթե մեղադրյալը գործել է հարկադրանքով կամ սպառնալիքով, և նա այլընտրանք չի ունեցել հրամանը կատարելու համար¹¹:

⁶ Tessa McKeown The Defence of Superior Orders in International Criminal Law: The Eichmann Trial and Kant's Philosophy Faculty of Law Victoria University of Wellington 2014.

⁷ Tessa McKeown The Defence of Superior Orders in International Criminal Law: The Eichmann Trial and Kant's Philosophy Faculty of Law Victoria University of Wellington 2014.

⁸ John Locke "Second Treatise of Civil Government" in The Works of John Locke (Thomas Davison, London, 1823) at 428.

⁹ Keijzer (n 49) 61-64.

¹⁰ See Medina (n 20) 82.

¹¹ R.V. Finta [1994] 1 SCR [701], Supreme Court of Canada.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՐՔԻ ՎԿԱՅԱԿՈՉՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ (ՀՈՈՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ 27-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

«Պետությունների միջև սահմանները չպետք է դիտվեն որպես վահան նրանց համար, ովքեր ոտնահարում են մարդկության տարրական օրենքները»¹²:

ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածի համաձայն՝

Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը

1. Հանրապետության նախագահն անձեռնմխելի է:

2. Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:

3. Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն իր լիազորությունների ավարտից հետո:

Աշխարհում տեղի ունեցող քաղաքական գործընթացների, անկայուն և լարված քաղաքական իրավիճակի, զինված հակամարտությունների թվի ավելացման պայմաններում հատկապես կարևորվում է պաշտոնատար անձանց անձեռնմխելիության ուսումնասիրությունը ՄՔԴ-ի Հռոմի կանոնադրության համատեքստում:

Պաշտոնատար անձանց կողմից միջազգային հանցագործությունների կատարման հետևանքով լայնածավալ զինված հակամարտությունները, մարդու իրավունքների զանգվածային խախտումներն արդիականացնում են նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Միևնույն ժամանակ, համաշխարհային հանրությունն այդ ճանապարհին բախվում է պաշտոնատար անձանց՝ ազգային օրենսդրությանը համապատասխան իմունիտետի առկայության խնդրին:

Այսպիսով, Հռոմի Կանոնադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասը օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի դրսևորում է՝ անկախ նրա անձեռնմխելիության առկայությունից: Լիովին արդարացված է այն մոտեցումը, որ պաշտոնական դիրքը չի կարող քողարկել միջազգային հանցագործություն կատարած անձին: Հակառակի առկայությունն անխուսափելիորեն կհանգեցնի մի իրավիճակի, երբ պաշտոնատար անձինք, կատարելով խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված մի շարք հանցագործություններ, կունենային բացարձակ իմունիտետ և պաշտպանություն քրեական հետապնդումից:

Անհրաժեշտ է նաև արձանագրել անձեռնմխելիության հարցի կարգավորման անհամապատասխանությունը ներպետական և միջազգային մակարդակներում: Այլ կերպ ասած, ներպետական իմունիտետը դադարեցնում է իր ազդեցությունը ՄՔԴ մակարդակում:

Ազգային օրենսդրությունը Հռոմեական կանոնադրության դրույթներին համապատասխանեցնելու և ՄՔԴ-ի հետ առավել արդյունավետ համագործակցության նպատակով անհրաժեշտ է կատարել համապատասխան սահմանադրական փոփոխություններ, որոնք նշում են, որ անձեռնմխելիությունը չի տարածվում Հռոմի կանոնադրության մեջ թվարկված հանցագործությունների վրա:

«Ֆրանսիայի Հանրապետությունը ճանաչում է Միջազգային քրեական դատարանի իրավասությունը՝ համաձայն 1998 թվականի հուլիսի 18-ին կնքված պայմանագրի»:

¹² Prosecutor v. Duško Tadić: Decision of the Appeals Chamber on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction of 2 October 1995 [Electronic resource] // ICTY. - Mode of access: <http://www.icty.org/x/cases/tadic/acdec/en/51002.htm>.

Ֆրանսիական որոշումը նախատեսում է դատարանի հետ համագործակցության հնարավորություն, այս որոշումը չի նշանակում, որ անձեռնմխելիությունը չեղյալ է հայտարարվում նաև կանոնադրության մեջ թվարկված հանցագործությունների ներպետական հետապնդման համար: Ֆրանսիան, այսպիսով, շարունակում է մնալ «չցանկացող կամ անկարող» երկրի ներսում քրեորեն հետապնդել նախագահի կատարած հանցագործությունները: Եթե նախագահի նկատմամբ հարուցվի քրեական հետապնդում, ապա ՄՔԴ-ն, այդպիսով, կկարողանա իրականացնել իր իրավասությունը, և Ֆրանսիան հնարավորություն չի ունենա իր իրավասությունը հաստատելու որպես հիմնական դերակատար: Հաշվի առնելով երկրի ներսում քրեական հետապնդում իրականացնելու անկարողությունը՝ Ֆրանսիան հնարավորություն չի ունենա խուսափելու ՄՔԴ-ի իրավասությունից՝ պաշտպանելով իր իրավասության առաջնահերթությունը: Սակայն, նա չի խախտի իր միջազգային պարտավորությունները, որոնք սահմանված են Հռոմի կանոնադրության մեջ¹³:

Այսպիսով, անհրաժեշտ է եզրակացնել, որ պաշտոնատար անձանց տրամադրվող ներպետական անձեռնմխելիությունները նպատակ ունեն քրեական արդարադատության ազգային մարմինների կողմից հետապնդումից նրանց երաշխիքներ տրամադրել: Բայց չպետք է գործեն այն դեպքում, երբ իրավասությունն իրականացվում է Միջազգային քրեական դատարանի կողմից: Բացի դրանից՝ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ ունենալ այնպիսի դրույթ, որ անձանց հանձնումը ՄՔԴ-ի իրավասությանը, չի հավասարվի օտարերկրյա պետությանը հանձնելու սովորական գործընթաց:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Այս սկզբունքն իր արտացոլումն է գտնում նաև մի շարք միջազգային իրավական ակտերում:

Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրության 86-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *Այն փաստը, որ Կոնվենցիայի կամ սույն Արձանագրության խախտումը կատարվել է ստորադաս անձի կողմից, չի ազատում իր վերադասներին քրեական կամ կարգապահական պատասխանատվությունից՝ կախված այն դեպքից, երբ նրանք գիտեին կամ իրենց տրամադրության տակ ունեին այնպիսի տեղեկատվություն, որը նրանց հնարավորություն կտար եզրակացության գալ այն ժամանակ գոյություն ունեցող միջավայրում, որ նման ստորադաս անձը կատարում է կամ մտադիր է կատարել նման խախտում, և եթե նրանք իրենց լիազորություններին:*

Այլ կերպ ասած, այս դրույթներում իր արտացոլումն է գտնում հրամանատարների թողութվությունը: Հրամանատարները, ելնելով իրենց վերադաս կարգավիճակից և պաշտոնական դիրքից, հնարավորություն ունենալով դիմակայել և խոչընդոտել իրենց ենթակա-զինծառայողների հակաիրավական վարքագծին, այս կամ այն պատճառով դա չեն անում՝ դրանով իսկ թույլ տալով թողութվություն:

Հրամանատարների նման անգործությունը, իրենց ենթակաների կողմից դրսևվորվող ոչ իրավաչափ վարքագծի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը որոշ չափով կարող են լավ «հոգեբանական» ուղեկցություն և հիմք դառնալ վերջիններիս կողմից նման գործողություններն ուժեղացնելու համար: Ազգային օրենսդրությունը Հռոմի կանոնադրության դրույթներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ քրեական օրենսգրքում առանձնացվել է 148-րդ հոդվածը՝ **Անգործությունը զինված ընդհարման ժամանակ:**

¹³ R.V. Finta [1994] 1 SCR [701], Supreme Court of Canada.

Իր ենթակաների գործողությունների համար հրամանատարի պատասխանատվության հարցը քննարկման առարկա է դարձել Յամաշիտայի գործով: Գեներալ Տոմույուկի Յամաշիտայի հրամանատարությամբ Ճապոնական ուժերը գտնվում էին Ֆիլիպիններում 1944-1945 թվականներին: Նրան մեղադրանք է առաջադրվել իր հրամանատարության տակ գտնվող այն անձանց գործողությունների նկատմամբ վերահսկողության պարտականությունները չկատարելու համար, որոնք խախտել են պատերազմի իրավունքը: Դատարանն իր որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Միանգամայն ակնհայտ է, որ զորքերի կողմից մարտական գործողությունների վարումը, որոնց անհամաչափությունը չի սահմանափակվում հրամանատարի հրամաններով կամ ջանքերով, Գրեթե հասարակ կհանգեցնի խախտումների: Բայց դա չի նշանակում, որ ռազմական գործողությունները պետք է իրականացվեն: Այդ խախտումների կանխարգելումն էլ հենց պատերազմի իրավունքի խնդիրն է: Քաղաքացիական բնակչությանը և ռազմագերիներին դաժանությունից պաշտպանություն տրամադրելու նրա նպատակը հիմնականում անհասանելի կլինի, եթե ներխուժող բանակի հրամանատարությունն անպարիժ անտեսի անհրաժեշտ ողջամիտ միջոցների ձեռնարկումը: Հետևաբար, պատերազմի իրավունքը ենթադրում է, որ դրա խախտումները պետք է կանխվեն հրամանատարների կողմից իրականացվող ռազմական գործողությունների վերահսկողության շնորհիվ, որոնք որոշ չափով պապասխանաբար են իրենց ենթակաների գործողությունների համար»¹⁴:

Յամաշիտայի գործով մեղադրանքում նշվել է, որ պատերազմի իրավունքը զինվորական հրամանատարին պարտականություն է վերապահում իր հրամանատարության տակ գտնվող զորքերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իր լիազորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել, որոնք ուղղված են պատերազմի իրավունքի խախտում հանդիսացող եւ անվերահսկելի զինվորների կողմից հակառակորդի տարածքի գրավմանը հաճախ ուղեկցող արարքների կանխմանը: Կարելի է ընդունել, որ նա անձնական պապասխանաբարություն է կրում նման միջոցներ ձեռնարկելու համար, եթե խախտումներ են տեղի ունենում»¹⁵:

Հանցագործությունները հաճախ կատարվում են քաղաքացիական կամ ռազմական հիերարխիայի ցածր մակարդակներում գտնվող անձանց կողմից, քանի որ նրանց ղեկավարները չեն կանխել դրանց կատարումը¹⁶:

Այս սկզբունքի կարևորությունը դժվար է գերազնահատել, քանի որ դրա բացակայության պայմաններում բազմաթիվ դեպքեր կլինեին, երբ հրամանատարները պնդում էին, որ իրենք նման արարքներ կատարելու հրամաններ չեն արձակել:

Հոդված 148. Անգործությունը զինված ընդհարման ժամանակ

2. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ պետի, հրամանատարի, վերադասի կամ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների սահմաններում բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկելը՝ ենթակայի կողմից սույն օրենսգրքի 133-րդ, 135-րդ կամ 137-146-րդ հոդվածներով նախատեսված հանցանքի կատարումը կանխելու համար, եթե նա չի իմացել, սակայն պարտավոր էր իմանալ, որ իր ենթական կատարում կամ մտադրվում է կատարել նշված հանցանքներից որևէ մեկը, այդ թվում՝ **եթե նա տիրապետել է այնպիսի տեղեկության, որի հիման վրա նա կարող էր կամ պարտավոր էր եզրակացնել ենթակայի կողմից հանցանքի կատարման կամ կատարման**

¹⁴ Джейми Аллан Уильямсон — Некоторые размышления об ответственности командования и уголовной ответственности. Том 90 Номер 870 Июнь 2008 г. Международный журнал Красного Креста. С. 131-132.

¹⁵ In Re Yamashita No. 61, Misc. Supreme Court of the United States 327 US 1; 66 S. Ct. 340; 90 L. Ed. 499; 1946 U. S. LEXIS 3090.

¹⁶ A. Cassese, International Criminal Law, Oxford University Press, Oxford, 2003, p. 205.

մտադրության մասին, կամ եթե իր իրավասության սահմաններում նա անփութության կամ հանցավոր ինքնավստահության հետևանքով չի ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ այդ հանցագործությունը խափանելու կամ կանխելու համար՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Եթե նա չի իմացել, սակայն պարտավոր էր իմանալ, որ իր ենթական կատարում կամ մտադրվում է կատարել նշված հանցանքներից որևէ մեկը, այդ թվում՝ **եթե նա տիրապետել է այնպիսի տեղեկության, որի հիման վրա նա կարող էր կամ պարտավոր էր եզրակացնել ենթականի կողմից հանցանքի կատարման կամ կատարման մտադրության մասին**, մինչդեռ Հռոմի Կանոնադրության 28-րդ հոդվածում դրույթը վերաբերում է միայն պետերին (ոչ ռազմական հրամանատարներին) և մի փոքր այլ կերպ է շարադրված «Պետը կամ գիտեր, կամ **գիտակցաբար անտեսեց** այն տեղեկատվությունը, որը հստակ ցույց էր տալիս, որ ենթակաները կատարել են կամ մտադիր են կատարել նման հանցագործություններ»: Հռոմի Ստատուտի մեջ օգտագործված այդ բառակապակցությունից հետևում է, որ խոսքը գնում է դիտավորության մասին, մինչդեռ ՀՀ ՔՕ վերը նշված հոդվածի մեջ օգտագործված «**նա չի իմացել, սակայն պարտավոր էր ... կարող էր կամ պարտավոր էր եզրակացնել ենթականի կողմից հանցանքի կատարման**» արտահայտությունը նման է անփութությանը:

Բացի դրանից՝ Հռոմի Կանոնադրության այդ հոդվածի մեջ նշվում է «**ակնհայտ**» բառը, որը, սակայն, բացակայում է ՀՀ ՔՕ հոդվածում:

Այսպիսով, անհրաժեշտ է հաստատել երկու կարևոր հանգամանք՝ պետի մոտ իր ենթակաների հանցավոր գործողությունների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը և նրա կողմից այդ տեղեկատվության գիտակցաբար անտեսումը: Այլ կերպ ասած, պետը որոշում է անգործ մնալ և ակտիվ գործողություններ չձեռնարկել այս տեղեկատվության հետ կապված:

NE BIS IN IDEM ՍԿԶԲՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Prosecutor v. Tadić, Decision on Non Bis in Idem

Այս որոշումը վերաբերում է non bis in idem սկզբունքով երկու պաշտպանական միջնորդություններին, որոնց դեմ էր դատախազը¹⁷: Պաշտպանական փաստարկներից մեկը՝ ի պաշտպանություն միջնորդությունների, այն էր, որ Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (այսուհետ նաև՝ ICTY) կողմից հարուցված վարույթը խախտում էր non bis in idem սկզբունքը, քանի որ մեղադրյալի դատավարությունն արդեն սկսվել էր Գերմանիայում (այն պետությունը, որտեղից մեղադրյալը տեղափոխվել էր ICTY): Դատախազը պատասխանեց, որ այս սկզբունքը սույն դեպքի վրա չի տարածվում, քանի որ գերմանայի դատարանները մեղադրյալին *չեն դատել*:

Ըստ Դատական պալատի՝

ICTY-ի առջև մեղադրյալի դատավարությունը չի խախտում non bis in idem սկզբունքը: Այդ եզրակացությանը հանգելու համար Դատախազության պալատը պնդեց, որ չկա այս սկզբունքի խախտում, ինչպես նախատեսված է Կանոնադրությամբ:

Non bis in idem սկզբունքը ինչ-որ ձևով հայտնվում է որպես շատ ազգերի ներքին իրավական օրենսգրքի մաս: Անկախ նրանից՝ բնութագրվում է որպես non bis in idem, կրկնակի վտանգ կամ autrefois acquis, autrefois condid, այս սկզբունքը սովորաբար պաշտպանում է անձին նույն արարքների համար երկու անգամ դատվելուց կամ երկու անգամ պատժվելուց:

¹⁷ Prosecutor v. Tadić, Decision on the Defence Motion on the Principle of Non Bis in Idem, Case No. IT-94-1-T, T. Ch. II, 14 November 1995, §§ 2-4.

Այս սկզբունքը ստացել է որոշակի միջազգային կարգավիճակ, քանի որ այն ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14(7) հոդվածում՝ որպես արդար դատաքննության իրավունքի չափանիշ, սակայն այն ընդհանուր առմամբ կիրառվում է այնպես, որ ծածկի միայն կրկնակի հետապնդումը **նույն Պետությունում**:

Սկզբունքը պարտադիր է այս Միջազգային տրիբունալի համար այնքանով, որքանով այն հայտնվում է Կանոնադրության մեջ և այն ձևով, որով այն հայտնվում է այնտեղ: *Անձը չի կարող Դատարանի կողմից դատապարտվել այն հանցակազմի հիմքը կազմող արարքի համար, որի համար այդ անձը Դատարանի կողմից ճանաչվել է մեղավոր կամ արդարացվել է:*

Ցույց տալով բազմաթիվ ազգային իրավական համակարգերի կողմից non bis in idem սկզբունքի ճանաչումը, Դատախազության պալատը միտումնավոր կամ պատահաբար հասկացրեց, որ non bis in idem-ը իրավունքի ընդհանուր սկզբունք է: Դատական պալատի կարծիքով՝ այս սկզբունքը սահմանում է, որ անձը չպետք է երկու անգամ դատվի կամ պատժվի նույն արարքների համար: Այն նաև պարզ դարձրեց, որ սկզբունքը վերաբերում է նույն Պետության ներսում **կրկնակի դատապարտման վտանգին**: Հետևաբար, սկզբունքը չի խանգարում, որ անձը մեկից ավելի պետություններում դատվի նույն արարքների համար:

Այնուամենայնիվ, Դատական Պալատը չի կիրառել non bis in idem-ը որպես իրավունքի ընդհանուր սկզբունք:

Այստեղից կարելի է բարձրացնել հետևյալ հարցը թե ինչ նշանակություն կունենա non bis in idem սկզբունքը միջազգային մակարդակում:

Եթե սկզբունքը փոխադրվի միջազգային իրավունքի մեջ նույն իմաստով, ինչ այն ունի ազգային մակարդակում (նույն պետության ներսում կրկնակի հետապնդման կամ պատժի արգելում), այն չի արգելի միջազգային դատարանին կամ տրիբունալին նույն արարքների համար անձին երկու անգամ հետապնդել կամ պատժել: Դա այդպես է, քանի որ, կոպիտ ասած, միջազգային քրեական դատարանը կամ տրիբունալը ներպետական դատարան չէ:

Ակնհայտ է, որ իրավունքի այնպիսի ընդհանուր սկզբունքի կիրառելիությունը, ինչպիսին է non bis in idem-ը, չի կարող ենթարկվել նման կոշտ մեկնաբանության: Սա անիրագործելի կդարձնի սկզբունքի կիրառելիությունը միջազգային դատարանի կամ տրիբունալի կողմից: Եթե սկզբունքը հարմարեցվի միջազգային միջավայրին, ապա սկզբունքը կհանգեցնի նույն միջազգային դատարանի կամ տրիբունալի շրջանակներում կրկնակի հետապնդման կամ պատժի արգելմանը: Մեր կարծիքով, սկզբունքի նման մեկնաբանությունը ողջունելի կլինի, հաշվի առնելով, որ ICTY-ի կանոնադրությունը չի նախատեսում որևէ իրավական դրույթ, որն արգելում է միջազգային տրիբունալին նույն արարքների համար անձին երկու անգամ հետապնդել կամ պատժել:¹⁸

Դատախազն այս գործով վերաքննիչ բողոք էր ներկայացրել ամբաստանյալի արդարացման որոշման դեմ՝ հիմնվելով Կանոնադրության 25-րդ հոդվածի վրա: Այս դրույթը չի արգելում դատախազին բողոքարկել արդարացման դատավճիռը: Համաձայն non bis in idem սկզբունքի՝ անձը չի կարող երկու անգամ դատվել կամ պատժվել նույն հանցագործության համար:

Ազգային իրավունքը

Նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմա-

¹⁸ The ICTR Statute and the SCSL Statute do not rule out such a possibility either; in contrast, the ICC Statute does rule so in Article 20, paragraph 1.

նագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք¹⁹: Ընդ որում՝ «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով:

Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքին անդրադարձ է կատարել Վճռաբեկ դատարանը Գ.Խնուսյանի թիվ ԵԷԴ/0030/01/12 գործով:

Նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս անձին արդարացվածի կարգավիճակ տալու անհրաժեշտությունը.

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարության իրավունքին համապատասխան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատապարտվել նույն արարքի համար»:

Մեջբերված նորմերով ամրագրված է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը: Նշված սկզբունքի բովանդակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Դ. Բաբայանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «[Կ]րկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում՝ «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով» (տե՛ս Դավիթ Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ1/0043/01/11 որոշման 22-րդ կետը):

Վերահաստատելով Դ.Բաբայանի գործով արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Գ.Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը ենթադրում է անձի և պետության միջև որոշակի արարքի կապակ-

¹⁹ Դավիթ Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ1/0043/01/11 որոշման 22-րդ կետը:

ցությամբ ծագած քրեական և քրեադատավարական իրավահարաբերությունների վերջնական դադարում: Ընդ որում, քրեադատավարական տեսանկյունից այն հիմնվում է քրեական հետապնդման սպառնալիքի ավարտված լինելու գաղափարի վրա: Այլ խոսքով՝ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը ենթադրում է, որ բացակայում է հանցավոր արարքը, քանի որ քրեական մեղադրանքի բովանդակությունը կազմող արարքի կապակցությամբ անձի և պետության միջև համապատասխան իրավահարաբերությունները ծագել և վերջնականապես դադարել են, այսինքն՝ իրավական առումով «հանցավոր արարք» գոյություն չունի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ մի շարք գործերում արտահայտած իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ անձը կորցնում է Կոնվենցիայի իմաստով՝ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտման հետևանքով «տուժողի» կարգավիճակը, երբ պետությունը ճանաչում է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտման փաստը, դադարեցնում է երկրորդ հետապնդումը և վերացնում խախտման հետևանքները՝ անձին առաջարկելով համարժեք հատուցում (տե՛ս *Zigarella v. Italy* գործով 2002 թվականի հոկտեմբերի 3-ի որոշում, գանգատ թիվ 48154/99, *Falkner v. Austria* գործով 2004 թվականի սեպտեմբերի 30-ի որոշում, գանգատ թիվ 6072/02, *Sergey Zolotukhin v. Russia* գործով 2009 թվականի փետրվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 14939/03, կետեր 113-115):

Այսպիսով, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտումը կհամարվի վերացված այն դեպքում, երբ՝

- ընդունվի կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում թույլ տալու փաստը, - դադարեցվի այդ խախտումը, - վերացվի խախտման հետևանքները՝ անձին տրամադրելով համարժեք հատուցում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված են կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտման փաստը ճանաչելուն և այդ խախտումը դադարեցնելուն ուղղված նորմեր, որոնք սահմանում են քննարկվող սկզբունքի խախտման դեպքում քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հիմքեր (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) և դրանց հիման վրա կայացված որոշումների պատճառաբանվածության պահանջ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ, 358-րդ հոդվածներ):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում *non bis in idem* սկզբունքն իր էական զարգացումն է ապրել 2002 թվականից *Smirnova and Smirnova v. Russia*²⁰ գործով կայացված որոշմամբ, որտեղ բացահայտվել է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի՝ «վերջնական որոշում» բաղադրատարրը, այնուհետև 2009 թվականին *Sergey Zolotukhin v. Russia*²¹ գործով «կրկնակի դատական հետապնդում» բաղադրատարրը, որից հետո «արդարացված» կամ «դատապարտված» բաղադրատարրերի վերաբերյալ ուղենիշային վճիռներ են կայացվել 2014 թվականին *Marguš v. Croatia* գործով և 2019 թվականին *Mihalache v. Romania* գործով:

Եվրոպական դատարանը կարևորելով «արդարացված» և «դատապարտված» հասկացությունների գործողության ոլորտը արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ ար-

²⁰ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smirnova and Smirnova v. Russia* գործով 2002 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 46133/99 and 48183/99:

²¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sergey Zolotukhin v. Russia* գործով 2009 թվականի փետրվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 14939/03, կետեր 113-115:

ծանագրության 4-րդ հոդվածի նպատակը այն անձանց պաշտպանելն է, ովքեր համարվել են «արդարացված» կամ «դատապարտված» non bis in idem սկզբունքի համաձայն: Այսինքն, բավարար չէ ունենալ միայն քրեական գործով վերջնական որոշում, այլ կարևոր է, որ այդ որոշումն անպայմանորեն վերաբերվի անձի արդարացմանը կամ դատապարտմանը²²: Ընդ որում՝ Եվրոպական դատարանը բացահայտել է Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի տեքստի անգլերեն և ֆրանսերեն տարբերակները և արձանագրել, որ ֆրանսերեն խմբագրությամբ (*acquitté ou condamné par un jugement*) անձը պետք է համարվի արդարացված կամ դատապարտված դատարանի որոշմամբ, իսկ անգլերեն խմբագրությամբ (*acquitted or convicted*) անձը պետք է համարվի արդարացված կամ դատապարտված: Հաշվի առնելով Կոնվենցիայի ինքնավար մեկնաբանման մոտեցումները՝ Եվրոպական դատարանը նշել է, որ ամեն դեպքում արդարացվածի կամ դատապարտվածի կարգավիճակի մասին պետք է խոսք գնա այն դեպքում, երբ մարմինը, որը կայացրել է անձի արդարացման կամ դատապարտման մասին որոշում ներպետական մակարդակում ունենա մասնակցություն արդարադատության իրականացմանը²³:

Հասկանալու, թե որոշումը համարվում է արդարացնող թե դատապարտող, Եվրոպական դատարանը քննության է առնում խնդրո առարկա որոշման բովանդակությունը և գնահատում է դրա հետևանքները դիմումատուի իրավիճակի վրա: Այլ կերպ, խնդրո առարկա պատճառաբանված որոշումը պետք է հանգեցնի անձի քրեական պատասխանատվության ապացույցների հետազոտմամբ գործի ըստ էության քննության արդյունքում: Ընդ որում՝ Եվրոպական դատարանը հատուկ ընդգծել է, որ այդպիսի որոշումը **պետք է լինի պատճառաբանված**:

Եվրոպական դատարանը նշել է, որ դատախազի կողմից քրեական գործի կարճումը չի համարվում ոչ արդարացում, ոչ էլ դատապարտում և հետևաբար չի ընկնում Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի պաշտպանության ներքո²⁴:

Բացի դրանից՝ Եվրոպական դատարանն անդրադառնալով կայացված որոշման վերջնական լինելու բաղդրատարրին նշել է, որ *res judicata* ուժ կարող է ստանալ միայն դատարանի դատական ակտը²⁵: Եվ վերջապես Եվրոպական դատարանն

ընդգծել է, որ դեր չի խաղում թե նոր մեղադրանքի որ կետերը կպահպանվեն կամ կմերժվեն հետագա դատական քննության ընթացքում, քանի որ Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածը երաշխավորում է, որպեսզի անհատին կրկին անգամ չդատեն կամ պատասխանատվության չենթարկեն, այլ ոչ թե արգելում է երկրորդ անգամ մեղադրել կամ արդարացնել:

Մեր կարծիքով, կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի ներպետական մակարդակում կիրառումը, չի կարող բացառել միջազգային քրեական պատասխանատվությունը: Կարող են լինել իրավիճակներ, երբ մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցվի և գործը չանցնի դատական ստուգման փուլ, այս դեպքերում նախ չենք կարող խոսել վերջնականապես արդարացման կամ վերջնականապես դատապարտման մասին, որով էլ պայմանավորված միջազգային քրեական պատասխանատվությունը չպետք է բացառվի:

²² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 88:

²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետեր 94-95:

²⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Marguš v. Croatia* գործով 2014 թվականի մայիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 4455/10, կետ 120:

²⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 117:

Եզրակացություն

Իրականացված ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է արձանագրել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության դրույթների՝ քրեական օրենսդրության սկզբունքների մասով Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության դրույթներին համապատասխանության զգալի մակարդակի մասին: Միևնույն ժամանակ, հոդվածում նշված առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ քրեական օրենսդրության սկզբունքների հետագա կատարելագործման համար՝ դրանց առավել արդյունավետ իմպլեմենտացման նպատակով:

Ամփոփագիր: Սույն հոդվածում վերլուծվել են միջազգային քրեական իրավունքի որոշ սկզբունքներ, որոնք հիմքեր են ստեղծում միջազգային հանցագործություններ կատարելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Վերլուծվել է Միջազգային քրեական իրավունքի պրակտիկան, ազգային քրեական օրենսդրության համապատասխանությունը հաստատված միջազգային պրակտիկային և Հռոմի կանոնադրության դրույթներին: Ուսումնասիրության հիման վրա առաջարկվում են քրեական օրենսդրության կատարելագործման վեկտորները և դրա կիրառման պրակտիկան: Հետազոտվել է *non bis in idem* սկզբունքը, որը որոշակի փոփոխությունների է ենթարկվել Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքում, վերլուծվել է մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, որը ծառայում է որպես ուղենիշ այս սկզբունքի իրականացման համար: Վերլուծվել է հրամանատարի պատասխանատվության սկզբունքը, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 148-րդ հոդվածի համատեքստում Անգործությունը զինված ընդհարման ժամանակ: Այս սկզբունքը հիմնարար նշանակություն ունի ինչպես միջազգային քրեական իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության մեջ, քանի որ հրամանատարները պարտավոր են միջոցներ ձեռնարկել ենթակաների կողմից խախտումները կանխելու համար: Հետազոտելով պաշտոնական դիրքին հղում կատարելու անթույլատրելիության սկզբունքը, հեղինակները նշում են, որ պաշտոնատար անձանց տրամադրվող ներպետական անձեռնմխելիությունները նպատակ ունեն քրեական արդարադատության ազգային մարմինների կողմից հետապնդումից նրանց երաշխիքներ տրամադրել, սակայն չպետք է գործեն այն դեպքում, երբ իրավասությունն իրականացվում է Միջազգային քրեական դատարանի կողմից: Բացի այդ, անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ ամրագրել այնպիսի դրույթ, համաձայն որի անձանց հանձնումը ՄԲԴ-ի իրավասությանը չի հավասարվի օտարերկրյա պետությանը հանձնելու սովորական գործընթաց:

Annotation. This article analyzes some principles of international criminal law that create grounds for bringing persons to criminal responsibility for committing international crimes. The article analyzes the practice of international criminal law, the compliance of national criminal legislation with established international practice and the provisions of the Rome Statute. Based on the conducted research, the vectors of improvement of criminal legislation and the practice of its application are outlined. The principle of commander's responsibility is analyzed, in particular, in the context of Article 148 of the Criminal Code of the Republic of Armenia. Inaction during an armed conflict. This principle is of fundamental importance both in international criminal law and in national law, since commanders have an obligation to take the necessary measures to prevent violations by subordinates. Analyzing the principle of the inadmissibility of references to official position, the authors note that the domestic immunities granted to officials are aimed at providing them with guarantees from prosecution by national criminal justice authorities, but should not apply when jurisdiction is exercised by the International Criminal Court. It is necessary to establish in legislation that the extradition of persons to the ICC will not be equated to the usual extradition process to a foreign State.

Аннотация. В настоящей статье проанализированы некоторые принципы международного уголовного права, создающие основания для привлечения лиц к уголовной ответственности за совершение международных

преступлений. Анализируется практика международного уголовного, соответствие национального уголовного законодательства сложившейся международной практике и положениям Римского Статута. На основе проведенного исследования обозначены векторы совершенствования уголовного законодательства и практики его применения. Внимание уделено принципу *non bis in idem*, который претерпел некоторые изменения в новом уголовном кодексе Республики Армения; проанализирована практика европейского суда по правам человека, служащая ориентиром для реализации данного принципа. Проанализирован принцип ответственности командира, в частности, в контексте ст. 148 УК РА Бездействие во время вооруженного конфликта. Данный принцип имеет основополагающее значение как в международном уголовном праве, так и национальном, поскольку на командирах лежит обязанность принять меры, необходимые для предупреждения нарушений со стороны подчиненных. Анализируя принцип недопустимости ссылки на должностное положение, авторы отмечают, что внутригосударственные иммунитеты, предоставляемые должностным лицам, направлены на предоставление им гарантий от судебного преследования со стороны национальных органов уголовного правосудия, но не должны действовать в том случае, когда юрисдикция осуществляется Международным уголовным судом. Необходимо закрепить в законодательстве, что выдача лиц МУС не будет приравниваться к обычному процессу выдачи иностранному государству.

Բանալի բառեր - Միջազգային քրեական իրավունքի սկզբունքներ, ազգային օրենսդրություն, հրահանիս հղում կարարելու անթույլատրելիություն, *non bis in idem*; պերի պարախախտությունը:

Keywords: *principles of international criminal law, national legislation, inadmissibility of referring to an order, non bis in idem, responsibility of the chief.*

Ключевые слова: *отмена исполнения решения суда, отмена исполнения судебного акта, статья 26 Закона «О принудительном исполнении судебных актов» РА.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Полный курс уголовного права. В 5 т. Т. 5 / Под ред. А.И. Коробеева. С. 707.
2. Elias, Olufemi and Lim, Chin, ‘‘General Principles of Law’’, ‘‘Soft’’ Law and the Identification of International Law’, NYIL, Vol. 28, 1997, pp. 3–49.
3. Приговор по делу в отношении В. Кейтеля
4. R.V. Finta [1994] 1 SCR [701], Supreme Court of Canada.
5. Israel, District Military Court for the Central Judicial District, Ofer, Malinki and Others case, Judgement, 13 October 1958.
6. Tessa McKeown The Defence of Superior Orders in International Criminal Law: The Eichmann Trial and Kant’s Philosophy Faculty of Law Victoria University of Wellington 2014
7. Tessa McKeown The Defence of Superior Orders in International Criminal Law: The Eichmann Trial and Kant’s Philosophy Faculty of Law Victoria University of Wellington 2014
8. John Locke ‘‘Second Treatise of Civil Government’’ in The Works of John Locke (Thomas Davison, London, 1823) at 428
9. Keijzer (n 49) 61-64.
10. See Medina (n 20) 82.
11. Prosecutor v. Duško Tadić: Decision of the Appeals Chamber on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction of 2 October 1995 [Electronic resource] // ICTY. - Mode of access: <http://www.icty.org/x/cases/tadic/acdec/en/51002.htm>.
12. Джейми Аллан Уильямсон — Некоторые размышления об ответственности командования и уголовной

ответственности. Том 90 Номер 870 Июнь 2008 г. Международный журнал Красного Креста. С. 131-132.

13. In Re Yamashita No. 61, Misc. Supreme Court of the United States 327 US 1; 66 S. Ct. 340; 90 L. Ed. 499; 1946 U. S. LEXIS 3090

14. A. Cassese, International Criminal Law, Oxford University Press, Oxford, 2003, p. 205.

15. Prosecutor v. Tadić, Decision on the Defence Motion on the Principle of Non Bis in Idem, Case No. IT-94-1-T, T. Ch. II, 14 November 1995, §§ 2-4.

16. The ICTR Statute and the SCSL Statute do not rule out such a possibility either; in contrast, the ICC Statute does rule so in Article 20, paragraph 1.

17. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Smirnova and Smirnova v. Russia* գործով 2002 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատներ թիվ 46133/99 and 48183/99:

18. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sergey Zolotukhin v. Russia* գործով 2009 թվականի փետրվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 14939/03, կետեր 113-115:

19. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 88:

20. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետեր 94-95:

21. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Marguš v. Croatia* գործով 2014 թվականի մայիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 4455/10, կետ 120:

22. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 117:

Սարգսյան Ա. - ի.գ.թ., Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ adelina-sargsyan@mail.ru:

Սուքիասյան Վ. - ի.գ.թ., Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, էլիասցե՝ varazdatsukiasyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 08.08.2025 թ., տրվել է գրախոսության 08.08.2025 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Ռուս-Հայկական համալսարանի պրոֆեսոր Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.: